ՊԻՈՆ ՀԱԿՈԲՅԱՆ

ԱԲՈՎՅԱՆ ԵՎ ՆԵՐՍԵՍ ԱՇՏԱՐԱԿԵՑԻ

Այս երկու մեծ հայորդիների փոխհարաբերությունները, մասնավորապես 1844-48 թթ. ընթացքում, ցարդ համակողմանի և խելամիտ քննության նյութ չեն դարձել, մինչդեռ առանց դրանց բնույթը պարզելու անկարելի է վերականգնել մեր հասարակական մտքի պատմության տվյալ ժամանակահատվածի անխարդախ պատկերը, ճիշտ հասկանալ գաղափարական գլխավոր հոսանքների էությունը:

Ասել՝ այդ ուղղությամբ որևէ փորձ չի արվել, կլիներ սխալ, որովհետև Աբովյանի մասին գրող յուրաքանչյուր ոք, խելոք թե հետևակ, իրեն իրավունք է վերապահել ծանրագույն հանցանքներ բարդել Նեսես Աշտարակեցու վրա՝ որակելով նրան, անգամ, ցարական պահնորդական բաժանմունքի արտահատիքային աստիճանավոր, որի անհոգի վերաբերմունքն ու դավերը ինքնասպանության մղեցին հայ մեծ լուսավորչին,-ինչպես նաև գավառացու ճաշակին պատշաճող մի քանի թունոտ խոսքեր նետելով «հանցագործի» հասցեին՝ ինքնագոհությամբ ավարտել ասելիքը:

Բայց այդ գրագետներն ու աչառու ուսումնասիրողներն ունեցե՞լ են իրենց ձեռքի տակ գրավոր անհերքելի ապացույցներ, որոնք իրավունք տային նրանց նմանօրինակ անվերապահորեն թշնամական վերաբերմունքի. ցավոք, վավերականությունը չստուգված մի եզակի աղբյուր միայն՝ Գևորգ Գեղամյանի մահվան առթիվ Միքայել Նալբանդյանի հրապարակած «Մահացուցակը» և հոդվածը, որոնք տպագրվել են «Հյուսիսափայլի» 1858 թ. փետրվարյան ամսատետրակում: Հանրաճանաչ գրողն ու քննադատն, իր իսկ հավաստիացմամբ, սոսկ վերարտադրել է Աբովյանի սիրելի աշակերտից անձամբ լսածը, այն էլ ընդամենը մի քանի դիպված, որոնց մեջ, սակայն, իրական ու հավանական անցքերի կողքին, ինչպես կտեսնենք, տեղ են գտել անկոծկելի անճշտություններ ու ժամանակագրական կոպիտ վրիպումներ, որոնց պատճառների բացահայտումը ոչ մեկին չի մտահոգել:

Ահա Նալբանդյանի հրապարակով ազդարարածը.

«1846 թվականին, մինչդեռ Նեսես արքեպիսկոպոսը, ստանալով կաթողիկոսական գավազան, վերադառնում է Բեսսարաբիայից դեպի էջմիածին, Ապովյանը յուր հառաջադեմ աշակերտների հետ միասին, որոնց մեջ կար և հանգուցյալը (Գ. Գեղամյանը-Պ. Հ.), Երևանից մի իջևան տեղ հառաջ գնաց Կաթողիկոսին: Սա հանդիպեցավ Ապովյանին և խոսելով նորա ուսումնական գործունեության վերա՝ հարց էր արել, թե ունի՞ արդյոք հառաջադեմ աշակերտներ. երբ լսել էր Ապովյանի ստորասական պատասխանը այդ մասին, խոստացել էր Կաթողիկոսը այդ հառաջադեմ աշակերտներից տասն տղա ուղարկել Բեռլին, որ այնտեղ պարապեին զանազան ուսման ճյուղերի: Ապովյանի ուրախությունը չափով չէր չափվում:

Անցան այն բանի վերայով մի քանի ամիսներ. Ապովյանը չէր դադարում ամենայն խնամատարությամբ կրթել և վարժել յուր աշակերտքը գերմանական լեզվի մեջ, քարոզելով նոցա, թե այդ լեզուն, մանավանդ, լինելու էր նոցա համար

բանալի մի այնպիսի լուսավոր տաճարի, որի լույսը բավական էր ցրվել Հայաստանի ասիական թանձր խավարը:

Անցանում են սորա վերա մի քանի ամիս. և Կաթողիկոսը արդեն օծված ու նստած լինելով հայրապետական Աթոռը, Ապովյանը դիմում է դեպի նա՝ խնդրելով որոշել ժամանակը, երբ կամք էր Վեհափառ Տիրոջը աշակերտքը Բեռլին ուղարկելու, որպեսզի Ապովյանը կարողանա այդ միջոցին պատրաստել յուր աշակերտքը: Կաթողիկոսը ցույց է տալիս մեծ հոժարություն, գովում է և օրհնում է Ապովյանին և խոստանում է կատարել նորա խնդիրը, մանավանդ թե յուր հայրապետական խոստմունքը, միայն թե փոքր-ինչ թեթևանար յուր գործերից: Ապովյանը քաջալերություն ստանալով այն կրկին անգամ խոստմունքից, ևս առավել լարում է յուր և աշակերտների զորությունը, մեծապես աշխատելով և աշխատեցնելով նրանց գերմանական լեզվի վերա:

Անցնում է համարյա թե մի տարի ժամանակ. Ապովյանը, մանավանդ որպես աշխույժ և ջերմ բնավորությամբ մարդ, վերջապես հուսահատվում է տեսանելով յուր աշակերտների անորոշ վիճակը. հավանում է Էջմիածին գնալ Երևանից, Կաթողիկոսի վճռական խոսքը լսելու համար:

Բայց ո՛վ վատաբաղդության ազգիս. կաթողիկոսը ժամանակ չունի մտածելու ազգային լուսավորության վերա, նորա ձեռքը պարապած չէ զանազան վիճակային գործերի մասին յուր հատուկ ձեռքով կոնդակներ գրելուց այս և այն գործակալին. Վեհափառ Տերը ժամանակ չունի ուշ և միտք դարձուցանել Հայոց ազգի նախապատիվ հոգալի օգտի վերա, նորա թանգագին զավակների իմացական բարօրության վերա:

Վրաստանի և Հաշտարխանի թեմակալ Կարապետ և Սերովբե արքեպիսկոպոսների հետ հարուցել էր Կաթողիկոսը անվերջանալի վեճ և խռովություն, որ ոչինչ խորհուրդ չունեին վերաբերությամբ դեպի Հայոց ազգային օգուտը և Եկեղեցու պայծառությունը:

Այս իրողությունների մեջ ահա ժամանում է Ապովյանը Էջմիածին. բայց, ինչպես պատմում էր հանգուցյալը, Ապովյանը մինչև Փարաքար գեղը, որ գտնվում է Երևանի և Էջմիածնի մեջ, ունեցել է սրտումը մի հաջողության հույս, իսկ որքան մոտենում է Մայր-Վանքին, այնքան ևս զորանում է երկմտությունը նորա մեջ, նորա հոգին գուշակում է գալոց անհաջողությունը: Շատ մեծ է անկեղծ և առաքինի հոգիների բնական ազդեցությունը:

Այս անգամ շատ սառն կերպով ընդունում է նորան Կաթողիկոսը, որպես երբեք չէր ընդունած. և Ապովյանի հարցմունքին, թե Վեհափառ Տեր, ի՞նչպես է ձեր կամեցողությունը ուղարկելի աշակերտների մասին, պատասխանում է Կաթողիկոսը. «Օրհնած, ի՞նչ անհանգիստ մարդ ես. քեզ մի բան ասացին, այլևս ձեռք չես վեր առնում դու»: Այս տխուր խորհրդավոր խոսքերը Կաթողիկոսի բերանից, որպես թե մուրճի զարկով՝ մի վայրկյանի մեջ փորեցին ու քանդեցին Ապովյանի հույսերի հիմքը, որոնց ավերակքը լվացվեցան հետո առաքինի հոգու ազգասիրական արտասուքի հեղեղով:

«Վարժապետ, ի՞նչ լուր, ի՞նչ համբավ»,–հանդեպ են դուրս գալիս աշակերտքը, որոնց մեջ գտնվում էր մեր հանգուցյալը. այս անմեղ մանուկների սիրտ կտրատող հարցմունքի պատասխանը լինում է Ապովյանի դեմքի տխուր գծագրությունը և արտասուքը, որ փայլում են նորա աչքերում: Այն օրը սուգի օր է եղած և՛ վարժապետի, և՛ աշակերտների համար: Մյուս օրից արդեն ուսման ընթացքը

ընդունում է այլ ուղղություն. «Ռուսերե՛ն, երեխայք, ռուսերե՛ն,– ասում է այնուհետև Ապովյանը,– դուք ինքներդ պիտի բանաք ձեր ճանապարհը»[1]:

Որ Ներսես Աշտարակեցու՝ Երևան ժամանելու օրը (1846 թ. մայիսի 8) Աբովյանը դիմավորողների մեջ էր ու հետո էլ իր աշակերտներով ներկայացել է նրան, անվիճելի ճշմարտություն է: Բայց ամբողջ հարցն այն է, որ Երևանից Էջմիածին ուղևորվելուց (մայիսի 13) և կաթողիկոս օծվելուց (հունիսի 9) հետո, Ներսես Աշտարակեցին Մայր Աթոռում մնաց հազիվ յոթ ամիս և 1846 թ. դեկտեմբերի 4-ին ճանապարհ ընկնելով դեպի Տփղիս՝ հետագա մեկ-երկու տարիներին այլևս չվերադարձավ Էջմիածին: Մինչդեռ, եթե հավատ ընծայենք Նալբանդյանին, Կաթողիկոսն առաջին այցին Էջմիածնում է մնացել 1846 թ. մայիսի կեսերից մինչև 1847 թ. դեկտեմբերի սկիզբը, որովհետև, Նալբանդյանի բառերով ասած՝ նախ «մի քանի ամիսներ», հետո՝ «մի քանի ամիս», հետո՝ «համարյա թե մի տարի», թվական վերարտադրությամբ կանի՝ 3-4, գումարած 3-4, գումարած 10-11 ամիս, կամ առնվազն, մեկ և կես տարի, հետևաբար՝ 1846 թ. մայիսին եթե ավելացնենք մեկ ու կես տարի, կհասնենք 1847 թ. վերջերին, իսկ Աբովյանն էլ այդ ընթացքում ամենաքիչը երեք անգամ, այն էլ տևական ընդմիջումներից հետո, նույն Էջմիածնի վանքում պետք է որ պաշտոնական հանդիպումներ ունեցած լիներ Կաթողիկոսի հետ, որոնք անհնար է առկա շուրջ յոթ ամիսների շրջանակներում, այսինքն՝ 1846 թ. մայիսի կեսերից դեկտեմբերի սկիզբն ընկած ժամանակահատվածում տեղավորել, հետևաբար Նալբանդյանի վերը հիշած գեղեցիկ պատմությունը՝ մինչև Փարաքար հասնելը ոգևորված Աբովյանի սրտում այնուհետև բույն դրած կասկածի և, վերջապես, Վեհարանում նրան ցույց տրված սառը ընդունելության և լսած կշտամբական խոսքերի մասին, վերածվում է գողտրիկ նովելի՝ կորցնելով վավերական արժեքը:

Ասել՝ դիտավորյալ է Մ. Նալբանդյանը հորինել այս պատմությունը, հազիվ թե արդարացի լինենք, մանավանդ որ Աբովյանի և Ներսես Աշտարակեցու միջև իսկապես անձնական ու գրավոր ու սուր բախումներ են եղել, բայց 1847 թ. երկրորդ կեսին, այն էլ՝ Տփղիսում, բայց ոչ՝ Էջմիածնում, բախումներ, որոնց Նալբանդյանը, կարծում ենք, տեղյակ չի եղել, այլապես առաջին հերթին դրանց մասին կպատմեր: Վերևի դրվագը շարադրելիս, կրկնում ենք, նրա աղբյուրն անմիջականորեն Աբովյանը չի եղել, այլ՝ վերջինիս աշակերտը, ավելի ճիշտ՝ արդեն հանգուցյալ Գ. Գեղամյանը. թերևս, ուրիշներն էլ, որոնք հեշտությամբ կարող էին խառնել վայրերն ու ժամանակները և թանձրացնել գույները:

Հետևաբար, ճշմարտությունը վերագտնելու միակ ճանապարհը մնում է Աբովյանի նամակների ու այլ գրությունների ուշադիր քննությունը և դեպքերի ու դեմքերի իրական ընթացքի ու խաղացած դերի, գրողի կյանքի նույն ժամանակահատվածի ճշգրտված ժամանակագրության վերականգնումը:

Բայց, մինչ այդ, մի անհրաժեշտ պարզաբանում. մեր բանասիրական թափառումների առաջին տարիներին, դեռ բավարար չափով ուսումնասիրած չլինելով սկզբնաղբյուրները և չշեղվելով Ներսես Աշտարակեցու անձի ու գործի գնահատման պաշտոնական տեսակետից՝ նրա և Աբովյանի փոխհարաբերությունները բնութագրել ենք միակողմանի և, ըստ էության, անճիշտ: Աբովյանի երկերի ակադեմիական հրատարակության VII հատորի Անձնանունների բառարանում ասել ենք, թե Ներսես Աշտարակեցին «հետագայում սկսեց հալածել հայ պրոգրեսիվ

---

[1] ԺԱՄ, էջ 58-60: Նալբանդյանի հիշյալ խոսքերը, համարյա բառացի, բայց առանց աղբյուրը մատնանշելու, իբրև եղելություն, առաջինը մեջ է բերել Մ. Տեր-Ազարյանցը (տե՛ս «Կռունկ հայոց աշխարհին», 1861, հմր. 7, էջ 539-540), որից և արտագրել ու այլափոխել են Քամալյանցն ու մյուսները:

գործիչներին, այդ թվում նաև Աբովյանին», որ «Աբովյանը սկզբում դրական վերաբերմունք է ունեցել Ներսես Աշտարակեցու նկատմամբ, սակայն իր կյանքի վերջին տարիներին բացասաբար է տրամադրվել և քննադատել նրան մահից քիչ առաջ գրած անստորագիր նամակում»[2]: VIII հատորի Անձնանունների բառարանում փոքր-ինչ խմբագրել ենք այս տողերը. «Աբովյանը նախապես դրական վերաբերմունք է ունեցել Ներսես Աշտարակեցու նկատմամբ, սակայն կյանքի վերջին տարիներին, մոտիկից ճանաչելով նրան, բացասաբար է տրամադրվել և քննադատել է իր մահից քիչ առաջ գրած անստորագիր նամակում»[3]: Վերջին՝ X հատորում փորձել ենք պարզել իրավիճակը և մեղմել գույները, սակայն նորից չհասնելով ճշմարտության. «Աբովյանի և Աշտարակեցու փոխհարաբերությունների հարցը,- գրել ենք,- հատուկ ուսումնասիրության նյութ է: Ներսեսի քաղաքականությունից բացահայտ դժգոհ լինելով հանդերձ՝ Աբովյանը երբեմն դիմել է նրա օգնությանը, չնայած մեծ մասամբ Կաթողիկոսը մերժողական կամ խուսափողական պատասխան է տվել նրան»՝ կրկնելով նաև, թե «հետագա տարիներին հալածել է հայ առաջադեմ գործիչներին, գործակցել հաճախ ցարիզմի հետ»[4], չնշելով որևէ անուն ու սկզբնաղբյուր, սակայն նկատի ունենալով Ներսես Աշտարակեցու փոխհարաբերությունները Մ. Նալբանդյանի հետ կամ Կաթողիկոսի մասին նրա կենդանության օրերին ու հետո ժողովրդի շրջանում տարածված պարսավագրերը:

Ըստ վերջիններից մեկի՝ 1848 թ. կեսերին ոմն Աբել քահանա Տփղիսում տարածում էր բավականաչափ ծավալուն մի գրություն, որի մեջ Ներսես Աշտարակեցուն մեղադրում էր, ի թիվս բազում «այլ հանցանքների», ժամանակի ականավոր ու գիտուն անձանց հալածելու համար, իբրև թե նա միանգամայն անպատվում, անտեսում ու անարգում էր այնպիսի գիտական անձանց, որպիսիք էին Հովհաննես եպիսկոպոս Շահխաթունյանը, Միքայել արքեպիսկոպոս Սալլանթյանցը, Ստեփանոս Նազարյանցը, Մեսրովբ Թաղիադյանը և, վերջապես, Խաչատուր Աբովյանը[5]:

Հետագայում, սակայն, մինչ պատրաստում էինք մեր ընդարձակ մենագրությունը Աբովյանի ու նրա դարաշրջանի մասին և պարտավորված զգալով վերծանել ու քննել Ներսես Աշտարակեցու նամակները, նրա տնտեսական օրագրերը, տասնամյակների ընթացքում կազմած հիշատակարանը, ուր մեջ էին բերված զանազան անձանց ուղղած նրա հազարավոր նամակների համառոտ բովանդակությունը, որոնցից շատերի բնագրերը չեն պահպանվել կամ կորել են անվերադարձ, կրկին ու կրկին համոզվեցինք, թե այլ բնութագրման ու քննության են արժանի Ներսես Աշտարակեցու անձն ու գործը և նրա ու Աբովյանի փոխհարաբերությունները:

Ներսես Աշտարակեցին բարդ անհատականություն է, 19-րդ դարի հայոց պատմության ամենամեծ դեմքերից մեկը, համազգային առաջնորդ ու բարերար, քաղաքական հեռատես գործիչ, վերածնողը Հայաստան աշխարհի և նոր շրջանի հայոց քաղաքական ու հոգևոր կյանքի: Այժմյան Հայաստանի գոյությամբ առաջին հերթին պարտական ենք նրան: Ներսես Աշտարակեցու ջանքերով 1828 թ.

---

[2] Ե VII, 509:

[3] Ե VIII 462:

[4] Ե X 427:

[5] Մատենադարան, ԿԴ հմր. 144/15, Աբովյանի անունը տե՛ս էջ 3: Բայց նույն Մատենադարանի հմր. 8916 ձեռագրում, ուր նույնպես կա հիշյալ գրությունը, Աբովյանի անունը բացակայում է: Վերջինից օգտվել է Աշոտ Հովհաննիսյանը «Նալբանդյանը և նրա ժամանակը» աշխատության մեջ (հ. I, էջ 48-49):

հայությունը հավաքվեց Արարատյան աշխարհում, իսկ ավելի առաջ բացվեց նոր ժամանակների հայության հոգևոր կյանքի դարբնոցը՝ Տփղիսի Ներսիսյան դպրոցը: Բացառիկ լրջություն ու խորաթափանցություն պետք է հանդես բերել նրա և Խ. Աբովյանի առնչությունները քննելիս, որովհետև նույնքան մեծ ու բարդ անհատականություն է նաև Աբովյանը:

2

Աբովյանի անկեղծ համոզմամբ՝ ազգերի, մասնավորապես հայերի հոգևոր կյանքի վերափոխողները և լուսավորության առաջամարտիկները հոգևորականությունը կամ հոգևոր դասն էր, հետևաբար նրանց վրա պետք է դրվեր ողջ հույսը. «Յոյս հոգևոր հիմնաւոր կրթութեան ամենայն ազգի, նա մանաւանդ մեր, ի հոգևորականաց միայն յառաջ գայ»,-գրել է նա 1845 թ. փետրվարին[6]:

Այս համոզումը մեկ օրվա ծնունդ չէր, այն սկսել էր ձևավորվել դեռևս 20-ական թթ. վերջերից, մինչ վանական աշխարհում կրթվելով ու հառաջանալով՝ Աբովյանը ծրագրում էր Մխիթարյան հայրերի օրինակով բուն Հայաստանում ևս միաբանություն ստեղծել և համակամ ու անձնվեր վանական եղբայրների միջոցով իրականացնել հայության հոգևոր վերածնունդը: Հետագայում, երբ Աբովյանը հանդիպեց Ֆ. Պարրոտին և վերջինիս աջակցությամբ ու ազդեցությամբ սրբագրեց իր լուսավորական-վերանորոգչական ծրագրերը, անխախտ թողեց հոգևորականությանը վերապահված դերը: Հայ կրթական կյանքի տասն և չորս դարերի փորձն ևս նույնն էր թելադրում, մանավանդ որ միջնադարյան Հայաստանի դպրոցներն ու համալսարանները ծաղկել էին վանքերում ու նրանց հովանու տակ, գիտնական-վարդապետների դասատվությամբ ու առաջնորդությամբ: Սահակ Պարթևից ու Մեսրոպ Մաշտոցից մինչև Սիմեոն Երևանցի՝ մեր լուսավորական ոգորումների պատմությունը, որն Աբովյանը հաճախ էր վերհիշում, այդ գաղափարի ճշմարտության լավագույն հաստատումն էր[7]: Դորպատյան վերջին տարիներին ևս (1834-36 թթ.), մինչ թղթին էր հանձնում իր նախագծումները հայոց և հարևան ժողովուրդների տնտեսական ու հոգևոր կյանքի վերափոխման շուրջ, նորից էջմիածնին ու հոգևորականությանը պատշաճ տեղ էր հատկացնում:

Բայց հայրենիք վերադառնալով՝ հայրապետական գահին Աբովյանը բաղմած տեսավ Հովհաննես Կարբեցուն, որը ոչ միայն չէր մտահոգված ազգի լուսավորությամբ, այլև Աբովյանի ու նրա համախոհների առաջադրած ծրագրերի վրա նայում էր որպես աղանդավորական (լյութերական) բանդագուշանքի և առանց դույզն ինչ վերաքննելու՝ մերժում: 1836-37 թթ., յոթ-ութ ամիս, առանց աշխատանքի և կարոտ՝ պատառ հացի, Աբովյանը տոկաց Տփղիսում, համբերությամբ տարավ ամեն դժվարություն ու նվաստացում՝ սպասելով թերևս, որ Կարբեցին վճիռը կփոխի և հնարավորություն կտա իրեն նվիրվելու սիրած գործին կամ, գեթ, քահանայացու մանուկների կրթությամբ պարապելու, բայց էջմիածնից հուսադրող լուրեր այդպես էլ չստացվեցին: Ճիշտ է, Աբովյանին էջմիածնի միաբանությունից չէին

---

6 Ե X, 269: Ավելի վաղ, 1834 թ., նույն միտքը Աբովյանը ձևակերպել է փոքր-ինչ այլ ձևով. «Լուսաւորութիւն ազգին մերոյ, ըստ իմ դատման, պարտի սկսանիլ ի հոգևորականաց մերոյ, որ **գլուխ է և հոգի ազգին մերոյ**», և իր այս համոզումն Աբովյանը բաժանել է Ներսես Աշտարակեցու հետ. խոսքերը նրան ուղղված նամակից են (Ն. տ., էջ 154: Ընդգծումը մերն է-Պ. Հ.):

7 Ն. տ., էջ 138, 141:

արտաքսում, ընդհակառակը, նրան անհապաղ վանք էին հրավիրում, բայց ոչ ուսուցչության, այլ Մայր Աթոռի այլևայլ հարկավորությունների համար:

Աբովյանը հարկադրված, բայց և մեծ դժվարությամբ, կարողացավ աշխատանք գտնել Տփղիսի գավառական դպրոցում՝ ներքուստ երբեք էլ չհաշտվելով Կաթողիկոսի անարդար վճռի հետ:

1838 թ. մայիս–հունիսին, մինչ առիթ ներկայացավ ճանապարհորդելու Հայաստանում, Աբովյանը մի վերջին փորձ ևս արեց, որպեսզի հաղթահարի ծագած դժվարությունները և վերստին վանք վերադառնալով՝ իրեն նվիրի ազգի լուսավորությանը՝ սկսելով վանական մոնթերից ու դպիրներից, որոնց միջից էին դուրս գալու Հայոց Եկեղեցու ապագա անձնվեր հովիվներն ու քարոզիչները: Իբրև հեղինակավոր միջնորդ, հանդես եկավ սենատոր Պավել Հանը, որը Նիկոլայ I-ի կարգադրությամբ Անդրկովկաս էր ժամանել՝ երկրամասի վարչա-տնտեսական նոր վերակառուցման ծրագիրը պատրաստելու և Նոր Բայազետի գյուղացիության խռովությունների պատճառներն ուսումնասիրելու նպատակով: Այդ առումով նա խորհրդակցում է Խ. Աբովյանի հետ և Տփղիսից Հայաստան մեկնելիս ուղեկից ընտրում նրան: Հովհաննես Կարբեցի Կաթողիկոսը, սակայն, կամակոր էր, անզիջող ու ենդ, ուստի հիմա էլ մնաց «անհողդողդ» և վճիռը չփոխեց:

Ներքին ծանր ու տևական պայքարից հետո Աբովյանին այլևս բան չէր մնում անելու, քան հրաժարվել հոգևոր կոչումից. 1838 թ. աշնանը նա համապատասխան խնդրագիր ուղղեց Էջմիածնի Սինոդին: Վերջինս երկար սպասեցնել չտվեց. 1839 թ. փետրվարին հարգվեց Աբովյանի խնդրանքը, և նա ի սպառ արձակվեց հոգևոր դասից, իսկ 1839 թ. սեպտեմբերին ամուսնանալով օտարազգու հետ՝ ընտանիք կազմեց, հետո երեխաներ ունեցավ, բայց հոգու խորքում միշտ էլ անբավարարված մնաց, որովհետև դրժել էր և՛ իր, և՛ ծնողների հավիտենական ուխտը՝ վանական կոչմանը հավատարիմ մնալու վերաբերյալ, քավության ու վերադարձի ճանապարհներն այժմ առմիշտ փակվեցին. «Ցաւ միայն է ինձ այն,–գրում է նա Հովհաննես Ղրիմեցուն 1840 թ. նոյեմբերի 1-ին,–զի ոչ կարացի նախկին վիճակակցաց և պաշտօնակցաց պիտանի, որոցն ցանկալի լինել, զորոցն միայն կախի լուսաւորութիւն և բախտաւորութիւն ազգին, բայց զի՞նչ արարից, իմ չեն այս յանցանք»[8]:

Կյանքը, սակայն, իր ընթացքն ունի և խորհուրդ չի հարցնում ո՛չ մեր բարեկամներից, ո՛չ էլ չարակամներից: 1842 թ. մարտի 26-ին վախճանվեց Հովհաննես Կարբեցին, իսկ հուլիսին Աբովյանին տեսնում ենք Մայր Աթոռում, տեղապահ Բարսեղ արքեպիսկոպոսի հետ առանձնակի զրուցելիս: Մեր համոզմամբ՝ Տփղիսից նա Էջմիածին էր շտապել հատուկ դիտավորությամբ: Այդ զրույցի ընթացքում, ինչպես կռահում ենք մի անուղղակի վավերագրից, դպրոցական–կրթական հարցերն էլ են շոշափվել[9]: 1843 թ. Մայիսի 18-ին համազգային հոգևոր ժողովը նոր Կաթողիկոս ընտրեց Ներսես Աշտարակեցուն, որի հետ ազգն ու Աբովյանը ժամանակին լուրջ հույսեր էին կապում հանրային կյանքին ու կրթությանը սատարելու առումով: Նույն այդ օրերին, դեպքերի բերումով, Աբովյանին էլ ենք հանդիպում Էջմիածնում: Օգտվելով Մորից Վագների հետ շրջագայելու առիթից՝ նա երկիցս այցելում է վանք և, անտարակույս, առաջին աղբյուրից լսում բաղձալի լուրը: Եթե մինչև այժմ Աբովյանին, չար անգղի նման, հալածում էր Հայաստանն առմիշտ թողնելու և Ռուսիա կամ Գերմանիա փոխադրվելու միտքը, հիմա

---

8 Ե X, 233–234:

9 Տե՛ս Դ II, 170:

առժամանակ մոռանում է այդ և սպասում Ներսես Աշտարակեցու գալստյանը՝ իր ապագայի վերաբերյալ վերջնական վճիռ կայացնելը վերապահելով գալիք իրադրությունների թելադրանքին: Հարկավ, Ներսեսի կաթողիկոսանալն էր այն հիմնական պատճառը, որ Աբովյանը 1843 թ. հունիսին, Տփղիս վերադառնալուց անմիջապես հետո, խնդրեց, որ իրեն ազատեն աշխատանքից և նույն պաշտոնով փոխադրեն Երևան, որտեղից ավելի դյուրին կլիներ հաղորդակցությունը Վեհի հետ: Թեպետ և Ներսես Աշտարակեցին դեռ ուշանում էր, բայց 1843 թ. օգոստոսի 15-ին Աբովյանն արդեն Երևանում էր և սպասումների մեջ:

Երկար խորհելով այս հարցերի շուրջ և մինչև իսկ այլոց հետևությամբ, մի կարճ ժամանակ էլ, Աբովյանի՝ Երևան հեռանալը դիտելով պատվավոր աքսորի հետևանք, մենք միայն հիմա ենք, ըստ էության, խորամուխ լինում նրա մտքերի ու նոր իրադարձության հետ կապված ծրագրերի մեջ, որ ցոլանում են 1846 և հետագա տարիների գրություններում:

Էջմիածնի նոր գահակալի անձով խանդավառված՝ Աբովյանը համոզում ու հավատացնում էր ինքն իրեն, թե նրա հովանու տակ ու աջակցությամբ, գոնե հիմա, հնարավորություն կստանա մարմին տալու տարիների խոհերին ու նվիրական երազանքներին և հիմքից սկսելով՝ բաղձալի ավարտի հասցնելու հայության լուսավորության շենքը, որն արմատապես հեղաշրջելով ազգի հոգևոր ու տնտեսական կյանքի պայմանները, սկիզբ էր դնելու նոր վերածնության: Աբովյանը մինչև անգամ որոշում է թողնել ընտանիքը և վանք վերադառնալ: Ուստի, կրկնում ենք, այն թյուր ենթադրությունը, թե Աբովյանը հեռացվում ու մեկուսացվում էր Տփղիսից և մի տեսակ կամավոր աքսոր ուղարկվում խուլ ծայրագավառ՝ Երևան, անհող է և ճշմարտությանը հակառակ: Աբովյանն, իրականում, սեփական նախաձեռնությամբ ու ցանկությամբ է այդ քայլին դիմել՝ զեկուցագիր մատուցել իրեն Երևան փոխադրելու համար, և շատ չանցած, պաշտոնական ձևակերպում տալով նոր նշանակմանը՝ անհապաղ շտապել Այրարատյան աշխարհի սիրտը, ազգակիցների շրջանում և մայր հայրենիքում մինչև մահ աշխատելու և ստեղծագործելու համար, չսպասելով անգամ Ներսես Աշտարակեցու՝ Բեսարաբիայից Էջմիածին ժամանելուն:

Աբովյանի այդ քայլը սրտանց ողջունել է գերմանացի գիտնական-ճանապարհորդ, Մյունխենի համալսարանի պրոֆեսոր Մորից Վագները՝ բնավ դրա տակ հալածանքի նշույլ չտեսնելով, այն դեպքում, երբ նա զանազան առիթներով խստորեն քննադատում էր Ռուսական կայսրության մեծապետական քաղաքականությունը և պաշտոնեության սանձարձակությունները Երևանյան գավառում:

«Անդրկովկասը թողնելուց քիչ առաջ,-գրել է Մ. Վագները,-ուրախությամբ իմացա, որ պարոն Աբովյանը նշանակվել է իր հայրենի քաղաքի՝ Երևանի գավառական դպրոցի տեսուչ: Այնպիսի խոր գիտելիքների և առաքինության տեր մարդուն, ինչպիսին նա է, իր ողջ անսպառ ուժերը հայրենի պատանեկությանը նվիրաբերելու՝ այսօրինակ ազնիվ ձգտում ունեցողին, այսպիսի ջերմ հայրենասերին, որը խորին երախտագիտությամբ է լցված հանդեպ կայսրը ու նվիրված է նրան, որովհետև վերջինս նրա մեծագույն բարերարն է եղել՝ միջոցներ տրամադրելով, որպեսզի նա ցանկություններն ու իղձերն իրականացնելու նպատակով գերմանական կրթություն ստանար Դորպատում, այսպիսի բացառիկ և, միաժամանակ, անանձնական մարդուն պետք է որ, հենց երկրամասի իրական շահերից ելնելով, գործունեության լայն ասպարեզ տրամադրվեր: Այնուամենայնիվ, գերմանական ոգու, գերմանական առաքինությունների այդ քաջարի սերմանողը, մինչևիսկ իր ներկա, բավականաչափ անձուկ պայմաններում, ոչնչի առջև կանգ չի առնում, որպեսզի իր հայրենի քաղաքի անուշադրության մատնված երիտասար-

դության մեջ ցանի սքանչելի հույսերի և գեղեցիկ հաջողությունների բազում արգասավոր սերմեր»[10]:

Երևան ուղևորվող Աբովյանը, իր իսկ խոստովանությամբ, ոչ թե միայն շտապում, այլ սուրում, թռչում էր. «... ընդ ոտն հարեալ զաշխարհս տարաձիգ՝ առ մայրն հաւատոյ դիմեցի ուխտիւ սրբութեան ... աղբեր լուսոյ տանս Թորգոմեան: Ասեմ՝ դիմեցի, բայց սխալիմ յոյժ, թևեցի ...»[11]:

1845 թ. փետրվարին հաղորդելով Ներսես Աշտարակեցուն այս արժանահիշատակ խոսքերը՝ Աբովյանն այնուհետև ավելացրել է. «Փառք ծնողաց և առ որդիս վերաբերին, այլ փառք և սխրագործութիւնք անձանց աւագունից՝ առ դարս ժամանակաց և ազգն բովանդակ: Սովին ձայնիւ և ազգն Հայոց՝ լքեալ և նքողեալ յամենայն բարեզարդութեանց ի դարուց հետէ, զՁեր տօնէ ի ծագաց տիեզերաց զընտրութիւն փափագելի ...» և այլն[12]:

Հանգամանքների բերումով՝ օգոստոսին և հաջորդ ամսին, օտարազգի ճանապարհորդների հետ (Ա. Հաքստհաուզեն, Պ. Լիվեն) Աբովյանը երկիցս այցելեց Էջմիածին (օգոստոսի 27–28-ին և սեպտեմբերի 5–10-ի միջև), բայց վանքի ժամանակավոր աթոռակալը և Սինոդի դատախազ Մ. Մատինովը նրան թշնամաբար ընդունեցին, նաև բողոքեցին բարձր իշխանություններին, որ Աբովյանն անհանգստացնում է իրենց, խնդրեցին ու պահանջեցին նրան Երևանից փոխադրել մեկ այլ վայր:

Աբովյանը, կարծես, այնուհետև, մի որոշ ժամանակ, մոռացավ վանքն ու հոգևորականներին՝ կրկին ընկնելով մտատանջության մեջ, արդեն որերորդ անգամ ապրելով հոգեկան ծանր տառապանքներ, որոնց բուն պատճառն իր լուսավորական-կրթական ձեռնարկումների և ազգային վերածնության ծրագրերի իրականացման ճանապարհին մշտապես ծագող անհաղթահարելի արգելքներն էին: Արդեն որերորդ անգամ նա համոզում էր իրեն, որ այսուհետև անկարելի պիտի լինի կյանքի գեթ տանելի պայմաններ և օգտակար գործունեության ասպարեզ գտնելն Անդրկովկասում, ուստի ժամ առաջ պետք է հեռանալ հայրենիքից ու Հայաստանից:

Այս հոգեվիճակում էր Աբովյանը, երբ նրան հասավ Ներսես Աշտարակեցու ձայնն ու հրավերը, որ գալիս էր Պետերբուրգից:

(Շարունակելի)

---

10 M. Wagner. Reise nach dem Ararat und dem Hochland Armenien. Stuttgart und Tübingen, 1848, S. 85-86.

11 *Ե* X, *295:*

12 *Ե. ա.:*